



## ԳԱՂՈՒԹԱՅԱՅ ԿՅԱՆՔ

### ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅՈՒՄ ՍՏԵՂԵՎԵԼ Է ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՀԻՐԵ, 20 դեկտեմբերի ՏԱՍՍ.— Աղեքսանդրիայում ապրող հայերը ստեղծել են Հայ ազգային խորհուրդ, որի լողունըն է՝ «Հայաստանը հայերի համար»:

Երեկ խորհուրդը մանիֆեստ հրապարակեց, որի մեջ ասված է.

— Աղեքսանդրիայի հայ բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչներից ըստեղծված Հայ ազգային խորհուրդը ընդունել է հետևյալ որոշումները:

1. Նկատի տանելով հայ ժողովրդի պատմական իրավունքները և հիմնվելով Միավորված Ազգերի կողմից բաղմիցս հռչակված մարդասիրության ու ազատության սկզբունքների վրա, և նկատի ունենալով այն, որ հայ ժողովուրդը համաշխարհային երկու պատերազմներում մեծ զոհեր է տվել ի պաշտպանությունը քաղաքակրթության՝ պահանջել, որ Սովետական Հայաստանին միացվեն հայկական նահանգները, որոնք Թյուրքիայի կողմից բռնի կերպով զավթվել են հակառակ Աևրի պայմանագրի, որն այդ նահանգները ճանաչում է որպես հայ ժողովրդի սեփականություն: Նման պահանջներ ներկայացվել են Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսին Ամերիկայի հայ ազգային խորհրդի կողմից:

2. Խրախուսել և օգնել, որ արտասահմանում

նում ապրող հայերը վերադառնան Սովետական Հայաստան:

3. Մեր գործի պաշտպանությունը անվերապահորեն վստահել Սովետական Հայաստանի կառավարությանը, որը վայելում է Սովետական Միության կառավարության և գեներալիտսիմուս Ի. Վ. Ստալինի վստահությունը:

4. Կուլտուրական կապեր ստեղծել մեր հայրենիքի հետ:

5. Արտասահմանում ապրող հայերի մեջ ստեղծել համերաշխություն և միասնություն:

6. Սերտ համագործակցություն հաստատել Կահիրեի Հայ ազգային խորհրդի հետ:

7. Զգտել մշակել արտասահմանի հայ ազգային խորհուրդների միասնական գիծ և այդ նպատակով ստեղծել կենտրոնական օրգան:

8. Հարգել այն երկրի օրենքները, որտեղ մենք ապրում ենք, ինչպես նաև եզիպտական իշխանություններին, որոնք մեզ հյուրասիրություն են ցույց տվել մեզ համար ծանր օրերին:

9. Մեզ կարող են միանալ առանց բացառության բոլոր հայերը և հայկական բոլոր խմբերն ու պարտիաները, այն պայմանով, որ նրանք անվերապահորեն ընդունեն այս մանիֆեստի բոլոր կետերը:

Աղեքսանդրիայի Հայ Ազգային Խորհրդի  
Լեխագահ՝ ՇԱՀԲԱԶ  
Քարտուղար՝ ԿԱԼԻՑԱՆ

### ԵԳԻՊՏՈՍԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԴԻՍՈՒՍԸ ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻՆ

ԿԱՀԻՐԵ, 18 հունվարի ՏԱՍՍ.— Հունվարի 14-ին Եգիպտոսի Հայ Ազգային Խորհուրդը Միավորված Ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի սեսիային հեռագիր է ուղարկել, որի մեջ ասված է.

«Պարոն նախագահ, Եգիպտոսի Հայ Ազգային Խորհուրդը հաշվի առնելով Միավորված Ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի սեսիային առաջ կանգնած խնդիրների պատմական նշանակությունը և արտարացիության ոգին, որով ղեկավարվելու են դեմոկրատական ներկայացուցիչները»:

Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի սեսիային առաջ կանգնած խնդիրների պատմական նշանակությունը և արտարացիության ոգին, որով ղեկավարվելու են դեմոկրատական ներկայացուցիչները»:

րը. ձեր բարձր ուշադրությունն է հրավիրում թյուրքերի կողմից օկուպացված հայկական տեղիտորիաները Սովետական Հայաստանին հանձնելու հարցի վրա: Գնալուտ անկախության համար հայ ժողովրդի մղած դարավոր պայքարին, շնայած այն բանին, որ մեր ազգի օրինական իրավունքները ճանաչվել են միջազգային պայմանագրերով, շնայած բռնապետության և ճնշման դեմ Միավորված Ազգերի ընդհանուր գործի համար մղվող պայքարում կրած վիթխարի զոհերին, մեր երկրի մեծ մասը մինչև այժմ գտնվում է թյուրքական տիրապետության ստի: Այդ հողերի օրինական տերերը, վրտարված իրենց հայրենիքից, հնարավորություն չունեն միանալու հարադատ երկրին:

Եղիպտոսի Հայ Ազգային Խորհրդի կողմից 1945 թվի հունիսին Սան-Ֆրանցիսկոյի կոնֆերանսին ներկայացված մեմորանդումի հիման վրա Հայաստանի պրոբլեմի սրագր և արդարացի լուծում գտնելու անհրաժեշտությունը և ազգային շահերի պաշտպանումը: Հանձնում է այդ բանի համար միակ և իրավազոր Սովետական Հայաստանի կառավարությանը:

Հավատացած, որ արդարության և ազատության համար պայքարած ըուր ժողովուրդները կպաշտպանեն մեր արդարացի պահանջը, մենք խնդրում ենք ձեռնից, պարուն նախագահ, ընդունել մեր հարգալից սրջումը:

Նախագահ՝ ՍԱՐՈՒԿԱՆՅԱՆ  
Քարտուղար՝ ԲԱԼԱՅԱՆ



ԻՆՅՐՈՒԹ, 18 հունվարի ՏԱՍՍ.— Լիբանանի Հայ Ազգային Խորհուրդը Միավորված Ազգերի կազմակերպության Գլխավոր Աստիճակի կոնդոնի սեսիայի նախագահին ուղարկել է հետևյալ հեռագիրը.

«Հայ Ազգային Խորհուրդը Միջուրում և Լիբանանում ապրող երկու հարյուր հազար հայերի անունից պահանջում է Սովետական Հայաստանին վերադարձնելու Թյուրքիային միացված հայկական հողերը: որտեղից հայերը բռնի ուժով բռնվել են, իսկ նրանց գույքը զավթվել է: Հայերը համաշխարհային ամբողջ պատերազմի ընթացքում եղել են հավատարիմ շահակիցներ: Համարյա քառորդ միլիոն հայ զին-

վորներ գտնվում էին Կարմիր Բանակի շարքերում, իսկ տասնյակ հազար հայեր մյուս դաշնակից բանակների շարքերում, մարտնչելով ճնշումից ազատագրվելու և մշտական խաղաղության համար: Մենք մեր իրավունքները ներկայացնում ենք միևնույն մեծ նպատակների համար զոհեր տված մյուս ազգերի հետ համահավասար: Մենք հույս ունենք, որ Միավորված Ազգերի կազմակերպությունը արդարացիորեն կլուծի հայ-թյուրքական կոնֆլիկտը»:

Հեռագիրն ստորագրել է Լիբանանի Հայ Ազգային Խորհրդի նախագահ դոկտոր Մանվելյանը:

**ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԳԵՐ. Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

ՌԻՈՒԴԻՇԱՆՅՐՈՒ, 25 հունվարի ՏԱՍՍ.— Բրազիլիա ուղևորվելիս Հարավային Ամերիկայի հայ եկեղեցու ղեկավար արքեպիսկոպոս Գարեգինը տեղական Ժողովուրդների համար հրավիրել է պրես-կոնֆերանս, որտեղ արտահայտել է իր տպավորությունները Սովետական Հայաստան կատարած իր այցելության մասին:

«Տրիբունա պոպուլյար» թերթը հունվարի 18-ի խմբագրական հորվածում նշում է այն հետաքրքիր զուգահեռությունը, որ այդ հայտարարության հրատարակման հետ

միաժամանակ «Ժուրնալ» թերթում լույս է տեսել Ջոն Պրիստլիի հորվածը Սովետական Հայաստանից ստացած իր տպավորությունների մասին, որը նույնպես հաստատում է Սովետական Միությունում կյանքի ու կուլտուրայի փարգավաճումը: Այդպիսի չեղոք անձանց վկայությունները, թերթի կարծիքով, լավագույն հերքումն են հանդիսանում այստեղ Սովետական Միության հասցեին ուժեղ կերպով տարածված ամեն տեսակ զրպարտության դեմ:

### ՀՈՒՆԱԿԱՆ „ԷՖԻՄԵՐԻՍ“ ԹԵՐԹԸ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աղեքսանդրիոս հունական մեծ օրաթերթը՝ «Էֆիմերիս» հրատարակած է մեր հունապետ ժրագրան աշխատակից ընկեր Բյուզանդ Տյուկկերյանի մեկ ընդարձակ հոդվածը հետևյալ խորագիրներուն տակ. «Կրոնական շարժումը Հայաստանի մեջ» — «Էջմիածնի Հայոց Կաթողիկոսին ընտրությունը»:

Գրության մեջ պատմական ծանոթություններ տրված են Մայր Աթոռի և Քրիստոնեության իբր պետական կրոնք Հայոց մեջ մուտքին մասին, Ս. Գրիգոր Լուսավորիչի և Տրդատ Թագավորի նախաձեռնությունները: Խոսված է աշխարհի բոլոր հայկական թեմերուն կրոնական և աշխարհական պատգամավորներուն մեկնումին մասին

Հայաստան, Խորհ. Միության և դաշնակից երկիրներու ընծայած դուրսվայանց շնորհիվ վեր է առնված Հայաստանի փայլուն մասնակցությունը դաշնակից պատերազմական ճիգին: Խոսված է Հայաստանի հսկայական առաջադիմության մասին ամեն մարդի մեջ — մշակութային, կրթական, ճարտարապետական և այլն: Ակնարկված է հայկական դատին, տր սեղանի վրա է դարձյալ, և հայկական հողային պահանջներուն: Հիշատակված են Հունահայոց Առաջնորդ Մազլումյան Ս.-ի հայտարարությունները հույն ազնիվ ժողովուրդին մասին և Հունահայոց առաջին հերթին Հայաստան ներգաղթելու կարելիությունը և այլն: («Աւել» քիվ 8101 1945 թ.)

#### ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՑՑԱՆ

### ԱՐԱՍԿԱՆԲ ՄԸ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՂԱՏՄՈՒԹՅՆԵՆ

Շատ կարևոր պատմություն մը ունի Կիպրոս կղզին, որ իր «Կիպրոս» անունն զատ դեռ 12 անուններով ծանոթ է պատմության մեջ: Իր անունը կատանա հրիերին, «cofber բառն, որ բույսի մը անունն է:

Քրիստոսի թվականն դարեր առաջ այս կղզին բնակչությունը մինչև 3 միլիոն բարձրացած էր, բայց այժմ հազիվ 400.000 բնակչություն ունի:

Միջին դարերուն, Հայկական գաղութը ստուար էր և ուներ 4—5 հայկական գյուղեր, հայկական վանքեր, եկեղեցիներ ու եպիսկոպոսական երկու անկախ թեմեր: Այժմ այս հայագյուղերը օտարներով բնակված են ու հազիվ քանի մը ավերակներ կհիշեցնեն հայկական հին հիշատակները: Այս գյուղերն են, ցարդ կպահ իր հիշատակելի անունը «Արմենոհորի», որ կը նշանակի «Հայագյուղ»:

Հայերի արդի թիվը 4000-ի մոտ է: Մինչև 1936 թվականը, Կիպրոսի թեմն ուներ իր արքեպիսկոպոս թեմակալ առաջնորդը, հանձինս Տ. Պետրոս արքեպիսկոպոս Սարաձյանի, որ վերջին եղավ Մեծի Տանն. Կիլիկիո կաթողիկոսը:

Կիպրոսի կարևոր քաղաքներուն մեջ գյուղություն ունեն հայ եկեղեցիներ ու հայ վարժարաններ. հոս վաղաշունտավարեն միաթե երկու քահանաներ, իսկ նոր առաջնորդի մը գալուստը շատ անհրաժեշտ է: Հոս կարծի հիշատակել, որ Կիպրոսի մայրաքաղաքին մոտ կգտնվի Մելքոնյան կըրթական հաստատությունը, որ ընդհանուրի

հիացման արժանի կարևոր հաստատություն մըն է ու պատիվ կգերե կիպրոսահայ գաղութին:

Կիպրահայ գաղութը իր ակիզը դրած ըլլալ կկարծի թ դարեն: Հայոց հնագույն եկեղեցին ու մենաստանն էր Ֆամակուստա քաղաքին մեջ գտնվող «Կանչուր Սուրբ Աստուածածին»-ին վանքը, ուր բնակված են հայ բարձրաստիճան եկեղեցականներ՝ ներսն կամբրոնացին, որ իր հունարենը պորացնելու համար Կիպրոս ժամանած էր, Թագոս արքեպիսկոպոսը, որ 1179 թվականին ներկա գտնված էր Հոմիկլայի նշանավոր համազգային մեծ ժողովին՝ պատասխանելու համար հունաց կայսեր ու կոստանդնուպոս տիեզերական պատրիարքին եկեղեցիներու միության շտաբ հայոց եկած հրավերին համար: Սույն մենաստանին մեջ նշանավոր հայ բարձրաստիճան եկեղեցականներ զբաղված էին ձեռագիրներ ու գրական գործեր պատրաստելով, ինչպես կհիշե պատմությունը:

Կիպրոսի հայոց արդի նշանավորագույն եկեղեցին է Նիկոսիո Սուրբ Աստուածածին եկեղեցին, որ կոկիկ ու ջնորհալի ձև մը ունի: Այս է կիպրահայոց արդի առաջնորդանիստ եկեղեցին, ուր պատմութեամբ են քանի մը տասնյակ արքեպիսկոպոս, եպիսկոպոս ու վարդապետ առաջնորդներ 16-րդ դարեն ի վեր: Նույնիսկ պաշտոնն քաջված պատրիարքներ ալ իբր առաջնորդ ժամանած են Կիպրոս:

Հիշատակության արժանի է նախ Կիպրոսի